# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ Արմավիրի մարզի <<Ջրարբիի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի << Բնություն>>/2 դասաժամ/ և <<Բնագիտություն>> /2 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղ : Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:
Մրցույթը անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի :

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է ( Ձև1), մեկ լուսանկար՝ 3-4 չափի
2. Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ /դիպլոմ/ կամ վերջին 10-ը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից

3. Անձը հաստատող փաստատթուղթ
4. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին ու աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավասատգրերի պատճենները ( դրանց առկայության դեպքում)

5. Ինքնակենսագրություն(Ձև5)
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք

7. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր / առկայության դեպքում/

9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ հոկտեմբերի 6-ից 19-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10.00-ից մինչև 15.00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետը հոկտեմբերի 19-ը ներառյալ : Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 20-ին , ժամը՝ 14:00-ին , Ջրարբիի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել ----098-688-800---հեռախոսահամարով: